ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 4, 1964 Общественные науки

Ցա. Ն. Զարոբյան

ԲԱՐՁՐԱՑՆԵԼ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ, ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՎԵԼԻ ԱՐԱԳՈՐԵՆ ՆԵՐԴՆԵԼ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ

Ճառ արտասանած Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի ընդհանուր ժողովում 1964 թ. ապրիլի 7-ին

Ընկերնե՛ր։ Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի հերթական ընդհանուր ժողովը տեղի է ունենում այնպիսի իրադրության մեջ, երբ ամբողջ երկրում աննախընթաց մասշտաբներով կազմակերպչական ու քաղաքական աշխատանք է ծավալվել պարտիայի XXII համագումարի պատմական որոշումների և ՍՄԿՊ նոր ծրագրի կենսագործման ուղղությամբ։

Պարտիայի Կենտրոնական կոմիտեն՝ ընկ. Ն. Ս. Խրուշչովի գլխավորությամբ, հաստատ ու հետևողականորեն վարելով ՍՄԿՊ XX համագումարի մշակած լենինյան կուրսը, սովետական մարդկանց ջանքերն ուղղում է երկրի էկոնոմիկայի ուժգին զարգացման, կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի արագ ստեղծման, ժողովրդի նյութական բարեկեցության հետագա բարձրացման մեծ նպատակին։

Կոմունիստական շինարարության արդի էտապում առանձնապես աճում է գիտության դերը։ Մեծ են սովետական գիտնականների հաջողությունները, նրանք իրենց ստեղծագործական անդուլ աշխատանքով նպաստում են մեր սոցիալիստական հայրենիքի արտադրողական ուժերի արագ զարգացմանը, նրա հզորության ամրապնդմանը։

Առաջնորդվելով Վ. Ի. Լենինի այն ցուցումներով, որ առանց նորագույն տեխնիկայի, առանց գիտական նոր հայտնագործությունների չի կարելի կոմունիզմ կառուցել, պարտիայի Կենտրոնական կոմիտեն և սովետական կառավարությունը հսկայական հոգատարություն են ցուցաբերում գիտության զարգացման նկատմամբ։

Այդ հոգատարության վառ դրսևորումներից մեկը եղավ 1963 թվականին ՍՄԿՊ Կենտկոմի և ՍՍՌՄ Մինիստրների սովետի ընդունած որոշումը, որի նպատակն է պրակտիկ կերպով կենսագործել պարտիայի նոր ծրագիրը, ուր նշված է, որ մեր երկրում գիտության կիրառումը դառնում է հասարակության արտադրողական ուժերի հզոր աճման գործոն։

Պարտիայի գլխավոր նպատակն է՝ նոր պայմաններում մեր գիտնականների առջև ավելի լայն ասպարեզ բացել տեսական խոր հետազոտությունների համար, կյանքի հետ գիտության հետագա մերձեցման և ժողովրդա-տնտեսական հրատապ պրոբլեմների լուծման համար։

Այսօր, երբ Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի ընդհանուր ժողովը ամփոփում է իր մեկ տարվա գործունեության արդյունքները, անհրա-

ժեշտ է աշխատանքը գնահատել ՍՄԿՊ Կենտկոմի և ՍՍՌՄ Մինիստրների սովետի որոշման կատարման տեսանկյունից, պարզ ու հստակ նշել կարտիայի XXII համագումարի առաջադրած խնդիրների հաջող իրականացման ուղիները։

ՄԵՐ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ

Ընկերնե՛ր, Հայաստանի գիտական աշխատողները մեծ ավանդ են մուծում մեր ռեսպուբլիկայի գիտական ու տեխնիկական առաջադիմության գործում։ Գիտության աշխատողների շարքերում արժանի տեղ են գրավում Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի կոլեկտիվները։ Գիտությունների ակադեմիայի 1963 թվականի հաշվետվության մեջ մանրամասնորեն ասված էր կատարված աշխատանքի, եղած թերությունների և առաջիկա խնդիրների մասին, ուստի թույլ տվեք ինձ համառոտակի կանգ առնել միայն առանձին հարցերի վրա։

1963 թվականը՝ յոթնամյակի հինգերորդ տարին, ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության զարգացման, նրա տեխնիկական առաջադիմության գործում նոր նվաճումների տարի էր։ Հայաստանի արտադրողական ուժերի զարգացման մեջ կարևոր դեր է պատկանում մեր գիտնականներին։

Անցած տարի Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի գիտական աշխատողները մի շարք նոր, արժեքավոր արդյունքներ ձեռք բերեցին մաթեմատիկայի, հաշվողական տեխնիկայի, մեխանիկայի, կարծր մարմնի ֆիզիկայի, ռադիոֆիզիկայի, աստրոֆիզիկայի, երկրաբանության, քիմիայի, ագրոքիմիայի, հասարակական գիտությունների բնագավառներում։

Այդ ժամանակաշրջանում գիտությունների ակադեմիայի գործունեության մեջ տեղի ունեցան որոշ որակական փոփոխություններ։ Նախ և առաջ, պետք է նշել, որ մեր գիտնականների ավագ սերնդի հետ մեկտեղ, որոնք ակադեմիա եկան նրա գոյության դեռ առաջին տարիներին, հանդես են գալիս երիտասարդ գիտնականներ, որոնք համարձակորեն են ձեռնամուխ լինում գիտական նոր խնդիրների լուծման։

Այսպես, մաթեմատիկայի ու մեխանիկայի ինստիտուտում մեր առաջատար մաթեմատիկոսների հետ միասին այժմ աշխատում են մի խումբ երիտասարդ մաթեմատիկոսներ, որոնք գերազանցապես առաջինների աշակերտներն են։ Այդ մաթեմատիկոսներից մի քանիսը, ինչպես, օրինակ, ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների դոկտոր Ա. Թալալյանը, իր բնագավառում կատարել է այնպիսի աշխատանքներ, որոնք հռչակվել են մեր երկրի մասնագետների լայն շրջանում և նրա սահմաններից դուրս։ Կրտսեր գիտական աշխատակից Ա. Ներսիսյանը իր վրա ուշադրություն գրավեց մաթեմատիկական նոր խնդիրների հմուտ լուծումով։ Օգտակար և շնորհակալ գործ են կատարում մեր այն խոշոր գիտնականները, որոնք ոչ միայն իրենք են արժեքավոր գիտական արտադրանք տալիս, այլև ջանք և ուժեր չեն խնայում երիտասարդ գիտնականների պատրաստման համար։

Երկրաբանական գիտությունների ինստիտուտի երիտասարդ գիտական աշխատողներ Ա. Ֆարամազյանը և Վ. Պարոնիկյանը ընդհանրացրել են ռեսպուբլիկայի հանքավայրերի կազմում հաղվագյուտ և ցրված տարրերի հայտնաբերման բազմամյա հետազոտությունների արդյունքները։ Երիտասարդ գիտաշխատողների մի այլ խումբ հանքաքարի բաղադրության մեջ մտնող ցրված տար-

ների շրջապտակների ուսումնասիրության հիման վրա գտել է որոնումային նոր հայտանիշեր և դրա հիման վրա հանձնարարականներ է տվել այնպիսի կոնկրետ հանքավայրերի համար, ինչպիսիք են Ախթալան, Շամլուղը, Տանձուտը։

Բյուրականի աստղադիտարանում երիտասարդ գիտական աշխատողները ամենաակտիվ մասնակցություն են ցուցաբերում գալակտիկաների միջուկներին վերաբերող աշխատանքներին և լուրջ հաջողությունների են հասնում։ Հայտնի է, որ այդ պրոբլեմատիկան գտնվում է արդի աստրոֆիզիկայի ուշադրության կենտրոնում։

Ուրախալի է նաև, որ ակադեմիան վերջին ժամանակաշրջանում սկսել է ընդգրկել գիտության նոր բնագավառներ, որոնք սերտորեն կապված են պրակտիկայի հետ։ *Մաթեմատիկայի ու մեխանիկայի ինստիտուտում նոր հետազոտություններ են սկսվել կոնստրուկցիոն պլաստիկների և ապակեպլաստիկների ասպարեզում։ Հատկապես պետք է նշել ակադեմիայի և պետական համալսարանի կողմից համատեղ սկսված շատ արժեքավոր հետազոտությունները, որոնք կատարվում են գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Մ. Լ. Տեր-Միքայելյանի ղեկավարությամբ։*

Այդ աշխատանքները կատարվում են արդյունաբերական ձեռնարկությունների հետ ստեղծագործական համագործակցության և փոխգործողության պայմաններում։ Կարո՞ղ է արդյոք գիտնականի համար լինել ավելի մեծ բավականություն, քան անմիջականորեն տեսնել իր ստեղծագործական աշխատանքի արդյունքների կիրառումը արտադրության մեջ։

Գեոֆիզիկայի և ինժեներական սեյսմոլոգիայի ինստիտուտը, որը գործում է Լենինականում՝ ակադեմիկոս Ա. Նազարովի ղեկավարությամբ, նշանակալի հաջողությունների է հասել շինարարական կառուցվածքների վրա սեյսմիկ երևույթների ներգործությունը մոդելացնելու պրոբլեմի ասպարեզում։ Դա գործնական կարևոր նշանակություն ունի մեր ռեսպուբլիկայի քաղաքներում նախատեսվող բազմահարկ շենքերի շինարարության կապակցությամբ։

Իրենց թեմատիկան փոխել և ավելի նպատակասլաց են դարձրել նաև միկրոբիոլոգները, որոնք արդեն աշխատանքներ են սկսել սպիտակուցների միկրոբիոլոգիական սինթեզի բնագավառում։

Քիմիկոսները, ագրոքիմիկոսները, բուսաբույծները և անասնաբույծները մեծ աշխատանք են կատարում ՍՄԿՊ Կենտկոմի դեկտեմբերյան և փետրվարյան պլենումների առաջադրած խնդիրների կատարման ուղղությամբ։ Քիմիական ռեակցիաների մեխանիզմի ուսումնասիրման ուղղությամբ հետաքրքրքրական աշխատանքներ են կատարվում օրգանական քիմիայի ինստիտուտում։ Հատկապես պետք է ասել ագրոքիմիայի լաբորատորիայում ակադեմիկոս Գ. Դավթյանի ղեկավարությամբ հիդրոպոնիկայի ասպարեզում կատարվող աշխատանքների մասին, որոնք բարձր գնահատական ստացան ՍՄԿՊ Կենտկոմի փետրվարյան պլենումում։

Ակադեմիկոս Ա. Մնջոյանի ղեկավարած նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտում անցյալ տարի ավարտվեց մի շարք հիվանդությունների բուժման որոշ նոր դեղամիջոցների ստեղծման աշխատանքը։

Տարեցտարի ավելի ու ավելի արդյունավետ է դառնում նաև հասարակական գիտությունների բնագավառում կատարվող աշխատանքը։ Հայաստանի գրականագետները հրատարակում են հայ նոր գրականության պատմու-

թյան, սովետահայ գրականության պատմության հատորները։ Պատմաբանները պատրաստում են Հայաստանի պատմության քառահատոր աշխատությունը։ Ուժեղացել է ստեղծագործական համատեղ աշխատանքը Ադրբեջանի, Վրաստանի, Ուկրաինայի և եղբայրական մյուս ռեսպուբլիկաների հասարակական գիտությունների աշխատողների հետ։

Դրական կարևոր նշանակություն ունեցավ գիտությունների ակադեմիայի հաշվողական կենտրոնի ու պետական համալսարանի համապատասխան պրոբլեմային լաբորատորիայի միավորումը մի հիմնարկում։ Կյանքը ցույց տվեց, որ միացյալ հաշվողական կենտրոն ստեղծվելու շնորհիվ նկատելիորեն բարձրացավ համալսարանում հաշվողական տեխնիկայի դասավանդման, ինչպես նաև այդ բնագավառում կատարվող գիտական աշխատանքների մակարդակը։

Ընկերնե՛ր. կարելի էր ավելի շատ խոսել մեր գիտնականների նվաճումների մասին։ Մենք իրավամբ հպարտանում ենք մեր գիտությունների ակադեմիայով, որին գլխավորում է աշխարհահռչակ գիտնական Վ. Հ. Համբարձումյանը։ Մենք բարձր ենք գնահատում Հայաստանի գիտնականների ավանդը հայրենական գիտության զարգացման գործում։

Դրա հետ մեկտեղ գործի շահերը պահանջում են ակադեմիայի գործունեության մեկ տարվա արդյունքները ամփոփելիս գիտական աշխատանքի վիճակը գնահատել ստեղծագործական քննադատության և ինքնաքննադատության ոգով։ Մենք պարտավոր ենք պարզորեն ու բացեիբաց ասել աշխատանքում եղած թերությունների մասին, վերլուծել դրանք և նշել Հայաստանի գիտությունների ակադեմիայի գիտահետազոտական հիմնարկների հսկայական պոտենցիալ հնարավորությունների ավելի լավ օգտագործման ուղիները։

ԱՇԽԱՏԱՆՔԸ ԴՆԱՀԱՏԵԼ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՆՔՆԱՔՆՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆՈՎ

Գիտությունների ակադեմիայի հաշվետվության մեջ, ինչպես նաև ընկերների ելույթներում արդեն ասվեցին առանձին լուրջ թերությունների և չլուծված խնդիրների մասին։

Գիտությունների ակադեմիայի աշխատանքն է՛լ ավելի բարելավելու նրկատմամբ Հայաստանի կոմպարտիայի Կենտկոմի մտահոգությունն ու ձգտումը պահանջում են անել նաև մի քանի քննադատական դիտողություններ։

Որպես ընդհանուր թերություն պետք է նշել, որ ակադեմիայի աշխատանքում չկա բավականաչափ կազմակերպական հստակություն։ Դա արտահայտվում է ամենից առաջ նրանում, որ գիտական պլանները կազմելիս գիտնականների աշխատանքը չի կենտրոնացվում ամենագլխավոր, վճռական հարցերի ու թեմաների մշակման վրա, որը անխուսափելիորեն հանգեցնում է ուժերի փոշիացմանը։ Թեմատիկ պլանները մշակելիս առանձին դեպքերում թույլ է տրվում հաճախ ոչ սկզբունքային մոտեցում, այսինքն՝ գործի շահերը ստորադասվում են առանձին գիտական աշխատողների շահերին։ Պետք է ուղղակի ասել, որ խստապահանջության բացակայությունը, իսկ առանձին դեպքերում

նաև գիտական աշխատանքին ոչ պետական մոտեցումը, բացասաբար են ազդում երիտասարդ գիտնականների դաստիարակության վրա։

Դա վերաբերում է բոլոր ինստիտուտներին և, առաջին հերթին, գիտությունների ակադեմիայի նախագահությանը, որը պարտավոր է ցույց տալ աշխատանքում բարձր պահանջկոտության ու կազմակերպվածության օրինակներ։

Հարկավոր է որքան կարելի է շուտ վերացնել այդ լուրջ թերությունը։ Ինչպես պլանները կազմելիս, այնպես էլ աշխատանքի պրոցեսում խստապահանջությունը թույլ կտա ոչ միայն ուժերը կենտրոնացնել կարևորագույն պրոբլեմների վրա, այլև կօգնի բարձրացնելու գիտական հետազոտությունների մակարդակն ու արդյունավետությունը։

Ինչպես հայտնի է, տարեցտարի աճում է տնտեսական գիտության դերը ժողովրդական տնտեսության զարգացման ասպարեզում։

Պետք է նշել, որ վերջին ժամանակներս գիտությունների ակադեմիայի տնտեսագիտության ինստիտուտը սկսել է մի շարք օգտակար հետազոտություններ կատարել կապիտալ ներդրումների արդյունավետ օգտագործման, ռեսպուբլիկայի աշխատանքի հաշվեկշիռը կազմելու ասպարեզում և այլն։ Ընդլայնվում և ամրապնդվում են նրա ստեղծագործական կապերը Անդրկովկասի Հանրապետական ռեսպուբլիկաների տնտեսագիտության ինստիտուտների հետ։

Բայց, հարկավոր է նաև շիտակորեն ասել, որ տնտեսագիտության ինստիտուտը առայժմ լրիվ չի կատարում իր առջև դրված խնդիրները։ Զժխտելով քաղաքատնտեսության և ժողովրդական տնտեսության պատմության ասպարեզում հետազոտություններ կատարելու անհրաժեշտությունը, մենք գտնում ենք, որ տնտեսագիտության ինստիտուտը պետք է ավելի խոր կերպով զբաղվեր ժողովրդական տնտեսության առաջատար ճյուղերի հետ կապված հարցերի լուծմամբ։ Թեև վերջին ժամանակներս տնտեսագիտության ինստիտուտը որոշ շրջադարձ կատարել է դեպի կոնկրետ էկոնոմիկան, բայց դեռ շատ քիչ են շոշափելի արդյունքները ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության համար։

Այդ ինստիտուտի ղեկավար, ակադեմիկոս Ա. Առաքելյանը կոլեկտիվի աշխատանքը այնպես պետք է կազմակերպի, որ բոլոր հետազոտությունները լինեն խիստ գիտական և սերտորեն կապված մեր կյանքի հետ։ Անհրաժեշտ է, որ տնտեսագիտության ինստիտուտը աշխատի ռեսպուբլիկայի պետպլանի հետ սերտ համագործակցությամբ, իսկ մի շարք դեպքերում խելացի օգնական ու խորհրդատու դառնա ժողովրդական տնտեսության զարգացման գիտական պլանավորման և պլանավորման մեթոդների կատարելագործման ասպարեզում։

Հարկավոր է միշտ հիշել, որ տնտեսագիտության ինստիտուտը շատ կարևոր օղակ է ակադեմիայի ամբողջ գիտական աշխատանքում, և մենք այսուհետև է՛լ ավելի խստապահանջ կլինենք նրա աշխատանքի արդյունքների նկատմամբ։

Օրգանական քիմիայի ինստիտուտը կարևոր հետազոտություններ է կատարում օրգանական արդյունաբերական սինթեզի և գյուղատնտեսական քիմիկատների սինթեզի բնագավառում։ Սակայն այս գործում էլ ինստիտուտում նկատվում է թեմատիկայի ցրվածություն և անհետևողականություն՝ աշխատանքում։ Թեև այնտեղ կատարվում են մի շարք օգտակար հետազոտությունն-

ներ, ինստիտուտը առայժմ չի հասել գիտական այնպիսի խոշոր արդյունքների, որոնք էապես անդրադառնան ռեսպուբլիկայի քիմիական արդյունաբերության զարգացման վրա։ Մենք համաձայն ենք, որ հարկավոր է ինստիտուտին ավելի շատ օգնել նրա լաբորատորիաների ընդլայնման ու հագեցման գործում, բայց դրա հետ միասին ինստիտուտի դիրեկտոր ընկ. Ա. Գասպարյանը պետք է ավելի շատ նախաձեռնություն ցուցաբերի և բարձրացնի պահանջկոտությունը աշխատողների նկատմամբ։

Մեզ թվում է, որ քննադատաբար չի գնահատվում նաև երկրաբանական գիտությունների ինստիտուտի գործունեությունը։ Այդ ինստիտուտը վերջին ժամանակներս զգալիորեն աճել է, ունի նոր շենքեր և լավ սարքավորված լաբորատորիաներ։ Սակայն դրա դիմաց նա դեռ բավարար չափով չի փոխհատուցում։ Ինստիտուտի գործունեության մեջ գլխավոր թերությունը պետք է համարել բազմաթեմայնությունը, ուժերի փոշիացումը և այն, որ դեռևս սնբավարար է ստեղծագործական կոնտակտը երկրաբանական վարչության գործունեության ու ռեսպուբլիկայի լեռնահանքային արդյունաբերության հետ։ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի ղեկավարությունը, ինչպես նաև գիտությունների ակադեմիայի նախագահությունը, պարտավոր են շատ կարճ ժամանակում վերացնել այդ լուրջ թերությունները և ամեն ինչ անել, որպեսզի ինստիտուտի մեծ կոլեկտիվը հմտորեն օգտագործի իր հսկայական հնարավորությունները և ավելի մեծ արդյունավետությամբ աշխատի ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության համար։

Ակադեմիայի նախագահությունը լուրջ թերություններ ունի նաև գիտական կադրերի պատրաստման գործում։ Հաճախ չեն կատարվում ասպիրանտուրայի ընդունելության պլանները՝ նամանավանդ գիտության նոր ուղղությունների և, մասնավորապես, նոր տեխնիկայի գծով։ Սակայն, ավելի լուրջ թերությունն այն է, որ ակադեմիայի նախագահությունը անհրաժեշտ խստապահանջություն չի ցուցաբերում ասպիրանտների ընտրության գործի նկատմամբ։ Երբեք չպետք է մոռանալ, որ այս հարցում որակը ունի վճռական նշանակություն։ Ճիշտ կլինի, եթե գիտությունների ակադեմիայի նախագահությունը հետագայում ապահովի գիտական կադրերի պատրաստման պլանի կատարումը գիտության բոլոր ճյուղերի գծով՝ ինչպես որակական, այնպես էլ քանակական տեսակետից։

Վերջապես, անհրաժեշտ եմ համարում ժողովի մասնակիցների ուշադրությունը հրավիրել ևս մի լուրջ թերության վրա։ Խոսքը վերաբերում է ժողովրդական տնտեսության մեջ գիտության նվաճումների ներդրմանը։ ՍՄԿՊ Կենտկոմի փետրվարյան պլենումում շատ սուր կերպով դրվեց գիտության նվաճումների ակտիվ պրոպագանդման և արտադրության մեջ դրանց ներդրման հարցը, իսկ մեզանում այդ գործը դեռ բարեհաջող չէ։

Օրինակ, օրգանական քիմիայի ինստիտուտի բաժիններից մեկի ղեկավար ընկ. Ա. Հակոբյանը կատարել է մի շարք նոր պոլիմերային նյութերի սինթեզ, այդ թվում մի նյութի, որից ստացվում է հրաշալի հատկություններ ունեցող հատուկ սոսինձ։ Դա կարևոր նշանակություն ունի ժամանակակից տեխնիկայի համար։ Այսպիսով ռեսպուբլիկայի լավագույն քիմիկոսներից մեկը՝ ընկ. Հակոբյանը կատարեց շատ արժեքավոր գիտական աշխատանք։ Բայց, դժբախտաբար, ոչ ընկ. Հակոբյանը, ոչ էլ ինստիտուտի ղեկավարությունը, բավարար եռանդ ու հաստատակամություն չցուցաբերեցին այդ քիմիական նյութի թեկուզ կիսաարդյունաբերական արտադրությունը կազմակերպելու համար։ Այդ դոր-

ծում մեծ մեղք ունի նաև ժողտնտխորհի ղեկավարությունը, որը շատ քիչ բան է արել սոսնձի արդյունաբերական արտադրությունը կազմակերպելու համար։ Հիմա ավելորդ գրագրություն է տեղի ունենում շահագրգռված հիմնարկների միջև, մինչդեռ այդ արժեքավոր գիտական հետազոտության արդյունքների արմատավորումը անթույլատրելիորեն ձգձգվում է։

Նույն ինստիտուտի մի այլ բաժնում, որի ղեկավարն է ընկ. Ս. Վարդանյանը, մշակվել է ացետալդեհիդի ստացման նոր, կատարելագործված եղանակ։ Ինչպես ինստիտուտի ղեկավարության, այնպես էլ ժողտնտխորհի աշխատողների մեղքով այդ աշխատանքը նույնպես չի ներդրվում արտադրության մեջ։

Անթույլատրելիորեն ձգձգվում է նաև նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտի մշակած այն նոր պրեպարատների ներդրումն ու արդյունաբերական թողարկումը, որոնք պետական կարևոր նշանակություն ունեն։ Այստեղ մեծ մեղք է ընկնում նաև ռեսպուբլիկայի շինարարության մինիստրության վրա, որը խախտել է շինարարական-մոնտաժային աշխատանքների բոլոր ժամկետները և ձգձգում է փորձնական արտադրական ցեխերի գործարկումը։

Ի մի բերելով վերևում հիշված թերությունները, պետք է նշել և այն, որ ակադեմիայի սիստեմում ոչ քիչ թվով գիտական աշխատողներ կան, որոնք տարիներով գիտական լուրջ արտադրանք չեն տալիս, իսկ ակադեմիայի և նրա ինստիտուտների ղեկավարությունը հաշտվողական վերաբերմունք, կարելի է ասել, անսկզբունքայնություն է ցուցաբերում այդ գործում։ Հարկ եղած պահանջկոտության բացակայությունը և սխալների ու թերությունների փոխադարձ ներումը խիստ բացասաբար են աղդում գիտական արտադրանքի որակի վրա։

Գիտությունների ակադեմիայի նախագահությունը և բաժանմունքների ղեկավարները դեռևս անբավարար են կատարում ՍՄԿՊ Կենտկոմի և ՍՍՌՄ Մինիստրների սովետի որոշման այն մասը, որը պահանջում է բարձրացնել գիտությունների ակադեմիայի՝ որպես գիտական մտքի կենտրոնի դերը ճյուղային ինստիտուտների և բուհերի նկատմամբ։

Մեղ թվում է, օրինակ, քիմիական գիտությունների բաժանմունքը իր շուրջը պետք է համախմբի ոչ միայն ակադեմիայի քիմիական ինստիտուտները, այլև մյուս գերատեսչությունների, կոմիտեների, բուհերի, քիմիական ինստիտուտների քիմիկոսներին և դառնա ռեսպուբլիկայում քիմիական գիտության իսկական կենտրոն։ Բաժանմունքը պետք է քննարկի ոչ միայն քիմիական գիտության հիմնական պրոբլեմները, այլև տեխնոլոգիական առաջադիմության և նոր արտադրություններ ստեղծելու հարցերը։ Օգտակար կլիներ, եթե քիմիական ձեռնարկությունների գլխավոր ինժեներները, գործարանային լաբորատորիաների վարիչները ավելի սերտ կապվեին ակադեմիայի քիմիական գիտությունների բաժանմունքի հետ։

Ասածս վերաբերում է գիտությունների ակադեմիայի նաև բոլոր մյուս բաժանմունքներին։ Հարկավոր է, ընկերներ, հաղթահարել որոշ գիտական կոլեկտիվների ու գիտնականների դեռևս շարունակվող անջատվածությունը։ Դրանում մեծ դեր է պատկանում նաև ռեսպուբլիկայի Մինիստրների սովետի գիտահետազոտական աշխատանքների կոորդինացման պետական կոմիտեին։

Անթույլատրելի է նաև, որ շինարարության մինիստրությունը վատ է կատարում գիտությունների ակադեմիայի օբյեկտների շին-մոնտաժային աշխատանքները։ Ակադեմիայի ինստիտուտների շատ լաբորատորիաներ միանգա-

մայն անբավարար են հագեցված ժամանակակից սարքավորումներով ու գործիքներով։ Մինչդեռ հաճախ առանձին ինստիտուտների ղեկավարներ ավելի հաստատակամորեն հաստիքների ավելացում են պահանջում, քան միջոցներ՝ նորագույն սարքավորումներ ձեռք բերելու համար, մի բան, որը, անշուշտ, չի կարելի ճիշտ համարել։

Հայաստանի կոմունիստական պարտիայի Կենտրոնական կոմիտեն և ռեսպուբլիկայի Մինիստրների սովետը պետք է գիտությունների ակադեմիային ավելի մեծ օգնություն ցույց տան արագացնելու իր օբյեկտների շինարարությունը, լաբորատորիաները զինելու նորագույն սարքավորումներով և գործիքներով։ Դրա հետ միասին Կենտրոնական կոմիտեն և մյուս պարտիական օրգանները պետք է ավելի խոր թափանցեն գիտությունների ակադեմիայի, գիտահետազոտական ինստիտուտների գործունեության մեջ և նրանց ավելի գործուն օգնություն ցույց տան վերացնելու եղած թերությունները և բարելավելու գիտահետազոտական աշխատանքները։

ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԼԱՅՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐՆ ՈՒ ԳԼԽԱՎՈՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ընկերնե՛ր, ռեսպուբլիկայի աշխատավորները ուժեր չեն խնայում հաջողությամբ ավարտելու ժողովրդական տնտեսության զարգացման յոթնամյա պլանը։ Ներկայումս մշակվում է արդյունաբերության, շինարարության, տրանսպորտի, գյուղատնտեսության, գիտության և կուլտուրայի զարգացման 1966—1970 թվականների նոր հնգամյա պլանը։ Մեզ համար միանգամայն պարզ է, որ գիտության զարգացման հետագա ուղղությունները պետք է սերտորեն կապված լինեն ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության զարգացման հետ։

ՍՄԿՊ Կենտկոմի դեկտեմբերյան և փետրվարյան պլենումների որոշումների իրագործման շնորհիվ ռեսպուբլիկայում արագ տեմպերով կզարգանան քիմիական արդյունաբերությունը և գյուղատնտեսական արտադրությունը։ Դրա հետ միասին մենք պետք է ապահովենք նաև արդյունաբերության ժամանակակից ճյուղերի՝ մեքենաշինության, էլեկտրատեխնիկայի, ռադիոէլեկտրոնիկայի, սարքաշինության, գունավոր մետալուրգիայի և մի շարք այլ ճյուղերի արագ զարգացումը։ Այդ նորագույն և միաժամանակ աշխատատար ճյուղերի արագ զարգացումը միայն մեզ թույլ կտա Հայաստանի պայմաններում հաջողությամբ լուծել երիտասարդությանը աշխատանքի տեղավորելու շատ կարևոր խնդիրը։

Ներկայումս նախատեսվում է կառուցել ռադիոտեխնիկայի համար օգտագործվող հատուկ կոնդենսատորների և կիսահաղորդչային փոխարկիչների գործարաններ։ Նշանակալի զարգացում կստանա մաթեմատիկական մեքենաշինությունը, որը կթողարկի էլեկտրոնային-հաշվողական մաթեմատիկական մեքենաներ ինժեներա-տեխնիկական կարիքների համար, կզարգանա կիսահաղորդչային տեխնիկան։ Երևանում, Լենինականում, Կիրովականում և այլ քաղաքներում կազմակերպվելու է մի շարք նորագույն էլեկտրասարքերի և ջերմաչափիչ սարքերի արտադրությունը։ Արդյունաբերության նորագույն ճյուղերի արագ աճի հետ մեկտեղ ընդլայնվելու է գիտահետազոտական և կոնստրուկտորական աշխատանքը։

Ռեսպուբլիկայի գիտությունների ակադեմիայի խնդիրն է՝ չցրել իր ուժերը, դրանք կենտրոնացնել որոշակի, հրատապ պրոբլեմների վրա, որոնք նպաստում են գիտատեխնիկական առաջադիմությանը և Հայաստանի ժողովրդական տնտեսության զոյություն ունեցող ու նոր ճյուղերի զարգացմանը:

Մեզ մոտ լայն աշխատանք է կատարվում մետալոգենիայի գծով, բայց խորքային երկրաբանության մեթոդները, հետախուզության գեոֆիզիկական մեթոդները, որոնք ավելի ու ավելի մեծ նշանակություն են ստանում, պատշաճ կերպով չեն զարգացել։ Մինչդեռ մեր հումքային պաշարների հետագա աճման համար մենք հարկադրված կլինենք թափանցել ընդերքի խորքերը *լավաների և այլ ապառների տակ։*

Օրինակ, ձեզ հայտնի է, թե ժողովրդատնտեսական ինչպիսի հսկայական նշանակություն ունի ռեսպուբլիկայի ընդերքում նավթի ու գազի հայտնաբերումը։ Մինչև 3.000 մետր խորության վրա կատարած որոնման-հետախուզման բազմամյա աշխատանքները առայժմ արդյունքներ չեն տվել։ Գուշակությունները ցույց են տալիս, որ նավթը կարող է գտնվել ավելի մեծ խորության վրա, ուրեմն անհրաժեշտ է կազմակերպել 5.000 և ավելի մետր խորությամբ հորատանցումներ։ Ահա թե ինչու ակադեմիայի խնդիրն է՝ ստեղծել մեծ խորությունների վրա գտնվող հարստությունների հայտնաբերման ու յուրացման գիտականորեն հիմնավորված մեթոդներ։ Մեր երկրաբանների ջանքերը պետք է կենտրոնացվեն տեսական այն հետազոտությունների մակարդակի բարձրացման վրա, որոնք կապված են օգտակար հանածոների որոնումների և հանքային հումքի կոմպլեքսային օգտագործման հետ։ Այդ խնդիրների հաջող լուծման համար շատ կարևոր է, որ երկրաբանության մեջ ավելի լայն ու խոր թափանցեն գեոֆիզիկայի և գեոֆիմիայի մեթոդները:

Ավելի ու ավելի է ընդլայնվում մեր ֆիզիկոսների աշխատանքի թեմատիկան և դա մեզ ուրախացնում է։ Բայց, ցավոք սրտի, ունենալով գունավոր մետալուրգիայի զարգացման մեծ հեռանկարներ, մենք գրեթե չունենք աշխատանքներ մետաղների ֆիզիկայի վերաբերյալ։ Պետք է հուսալ, որ հետագայում մետաղների ֆիզիկան կդառնա ռեսպուբլիկայի գիտությունների ակադեմիայի դեմքը որոշող բնագավառներից մեկը։ Անհրաժեշտ է, որ մոլիբդենի և մյուս մետաղների, հազվագյուտ և ցրված տարրերի ֆիզիկան ու տեխնոլոգիայի հիմունքներն ավելի մեծ ուշադրության արժանանան մեր գիտնականների կողմից։

Քիմիական արդյունաբերությունը ռեսպուբլիկայում լայն զարգացում է ստացել և հետագայում ավելի կզարգանա: *Մենք ունենք քիմիկոսների հիանալի կադրեր, որոնք պետք է լուծեն ՍՍԿՊ Կենտկոմի դեկտեմբերյան (1963 թ.) պլենումի որոշումների իրականացման գիտական և արտադրական մի շարք կարևոր ու բարդ խնդիրներ։ Այս տարի ռեսպուբլիկայի քիմիկոսները պետք է երկրում առաջին անգամ յուրացնեն հայրենական սարքավորումներով բնական գազից ացետիլեն ստանալու տեխնոլոգիան։ Մեր գիտնականների խնդիրն է՝* գտնել քիմիական խոշոր արտադրությունների նոր տեսակների ստեղծման համար բնական հումքային ռեսուրսներն օգտագործելու նոր արդյունավետ ուղիներ: *Ահա թե ինչու գիտությունների ակադեմիան հետագայում պետք է է՛լ ավելի մեծ ուշադրություն նվիրի ինչպես օրգանական, այնպես էլ անօրգանա-*

ԵՐԵՎԱՆ

կան քիմիային, այդ թվում «փոքրատոննաժ» քիմիային, ինչպես նաև համապատասխան տեխնոլոգիական պրոցեսների գիտական հիմունքներին։

Մենք պետք է դեռ շատ բան անենք, որպեսզի կատարելագործված մեքենաներ ու սարքեր թողարկենք ավելի լայն ասորտիմենտով, գիտության ու տեխնիկայի նորագույն նվաճումների հիման վրա։ Ճյուղային այնպիսի խոշոր ինստիտուտների առկայությունը, ինչպիսիք են էլեկտրամեխանիկայի համամիութենական գիտահետազոտական ինստիտուտի հայկական ֆիլիալը, մաթեմատիկական մեքենաների ինստիտուտը և այլն, լիովին թույլ է տալիս ապահովելու տեխնիկական առաջադիմության արագ տեմպեր էլեկտրատեխնիկական և սարքաշինական արդյունաբերության ասպարեզում։

Խնդիրն այն է, որ այդ ինստիտուտներն աշխատեն գիտությունների ակադեմիայի ֆիզիկոսների ու մաթեմատիկոսների հետ ստեղծագործական սերտ կապերով, մի բան, որ թույլ կտա ավելի հաջողությամբ կատարել արդյունաբերության հիշյալ ճյուղերի առջև դրված մեծ խնդիրները։

Բացի դրանից, մոտակա տարիներս, ինչպես ասվեց, Հայաստանում բուռն կերպով կզարգանան ռադիոէլեկտրոնային արդյունաբերությունը, ռադիոսարքերի և ռադիոմասերի արտադրությունը, որը տեխնիկական առաջադիմության հիմքերից մեկն է։ Ուստի, ակադեմիան պետք է ամեն կերպ զարգացնի ռադիոֆիզիկան, ռադիոտեխնիկան, էլեկտրոնիկան և հասնի այն բանին, որ գիտությունների ակադեմիայի ռադիոֆիզիկայի ու էլեկտրոնիկայի ինստիտուտը ակտիվորեն մասնակցի ռադիոտեխնիկական արդյունաբերության զարգացմանը։

Սարքաշինության մյուս ճյուղերի հետ մեկտեղ ռեսպուբլիկայում կզարգանա նաև գիտական սարքաշինությունը։ Այդ գործին մեծ ապագա է սպասում։ Ահա թե ինչու մենք պետք է պաշտպանենք գիտությունների ակադեմիայի նախագահության առաջարկը՝ ակադեմիայում գիտական սարքաշինության հատուկ հետազոտությունները զարգացնելու և առաջիկա հնգամյակում գիտական ապարատների ինստիտուտ կազմակերպելու մասին։

Հաշվի առնելով արդյունաբերության զարգացման նորագույն տենդենցները, մենք պետք է Հայաստանում ավելի եռանդուն կերպով զարգացնենք կարևորագույն բիոլոգիական ուսումնասիրությունները և առաջին հերթին, բիոքիմիայի ու բիոֆիզիկայի բնագավառները։

Մեր գիտնականների խնդիրն է՝ գտնել ՍՄԿՊ Կենտկոմի դեկտեմբերյան և վերջերվարյան պլենումների որոշումների արագ ու հաջող իրագործման ուղիները։ Այդ կապակցությամբ կենսաբանական ու գյուղատնտեսական գիտությունները պետք է մի շարք խոշոր պրոբլեմներ լուծեն։ Խոսքը վերաբերում է հողի քիմիացման պրոբլեմի հմուտ լուծմանը, Արարատյան դաշտավայրի աղուտների յուրացմանը, էրոզիայի ենթակա հողատարածությունների արդյունավետ պաշտպանությանը։ Այդ և մյուս խնդիրների լուծումը պահանջում է է՛լ ավելի ընդլայնել ու բարձրացնել գիտական հետազոտությունների տեսական մակարդակը և հաստատակամորեն արմատավորել ձեռք բերված արդյունքները։

Գիտությունը մշակել է մի շարք խնդիրներ, որոնց իրագործումը խոստանում է լավ արդյունքներ տալ։ Խոսքը վերաբերում է ամենից առաջ արհեստական միջավայրում հիդրոպոնիկ եղանակով բույսեր աճեցնելուն։ Ինչպես արդեն ասվեց, ակադեմիկոս Գ. Դավթյանը լուրջ աշխատանք է կատարել հիդրոպոնիկայի զարգացման ասպարեզում, որը կարևոր ավանդ է ոչ միայն մեր

ռեսպուբլիկայի, այլև ամբողջ Սովետական Միության գյուղատնտեսության և կենսաբանության մեջ։

Հիդրոպոնիկան գյուղատնտեսության ինտենսիվացմանը նպաստող լավ միջոցներից մեկն է։ Այս կապակցությամբ Հայաստանի կոմպարտիայի Կենտկոմի նախագահությունը և ռեսպուբլիկայի Մինիստրների սովետը վերջերս որոշում ընդունեցին, որտեղ շարադրված է բանջարանոցային կուլտուրաների, ինչպես նաև սպիտակուցային կերերի հիդրոպոնիկ արտադրությունը զարգացնելու գործնական միջոցառումների մի ծավալուն ծրագիր։ Գիտությունների ակադեմիայի խնդիրն է է՛լ ավելի ընդլայնել գիտական հետազոտությունները այդ կարևոր բնագավառում և հաջողությամբ լուծել գյուղատնտեսական արտադրության այդ առաջադիմական և ինդուստրիալ ճյուղի զարգացման գիտական խնդիրները։

Մեծ ու պատասխանատու խնդիրներ ունեն նաև հասարակական գիտությունների աշխատողները։ ՍՄԿՊ նոր ծրագիրը հասարակական գիտությունների բոլոր ճյուղերի առջև դնում է մի շարք նոր պրոբլեմներ, որոնց ստեղծագործական մշակման համար պահանջվում է խորապես ուսումնասիրել և տեսականորեն ընդհանրացնել այն արմատական փոփոխություններն ու նոր երևույթները, որոնք կոմունիզմին անցնելու ժամանակաշրջանում երևան են գալիս գիտության, տեխնիկայի, էկոնոմիկայի, հասարակական հարաբերությունների, կուլտուրայի և գաղափարախոսության բոլոր բնագավառներում։ Անհրաժեշտ է, որ հումանիտար գիտությունների աշխատողներն իրենց բոլոր հետազոտություններն ավելի սերտորեն կապեն կյանքի, կոմունիստական շինարարության պրակտիկայի հետ։

Ցանկալի է, որ հայ ժողովրդի կուլտուրայի պատմության խոր ուսումնասիրման հետ մեկտեղ ընդլայնվեն մյուս ժողովուրդների և առաջին հերթին մեր սահմանակից երկրների ժողովուրդների կուլտուրայի պատմության հետազոտությունները։ Դա թույլ կտա անցնել Մերձավոր Արևելքի և Անդրկովկասի ժողովուրդների կյանքում տեղի ունեցած ու տեղի ունեցող հասարակական երևույթների ավելի լավ և ավելի լայն ըմբռնման ու ընդհանրացման։

Հասարակական երևույթներն ուսումնասիրելիս երբեք չպետք է ղեկավարվել ազգային նեղ շրջանակներով։ Սոցիալիստական ինտերնացիոնալիզմը միշտ եղել է և մնում է մեր պարտիայի քաղաքականության լենինյան հիմնական սկզբունքը։ Այդ հատկապես հարկավոր է շեշտել մանավանդ այսօր, երբ Չինաստանի կոմպարտիայի ղեկավարները ամբողջապես շեղվելով դեպի մեծապետական, նացիոնալիստական դիրքերը, նենգ հարձակումներ են կատարում Սովետական Միության կոմունիստական պարտիայի և մյուս եղբայրական մարքս-լենինյան պարտիաների վրա։

Ինչպես ձեզ քաջ հայտնի է, Հայաստանի և բոլոր մյուս եղբայրական ռեսպուբլիկաների կոմունիստները և աշխատավորությունը միահամուռ հավանություն տվեցին մեր պարտիայի, ընկեր Ն. Ս. Խրուշչովի գլխավորած նրա Կենտրոնական կոմիտեի՝ միջազգային կոմունիստական շարժման միասնության ամրապնդման ուղղությամբ գործադրած ջանքերին։ (Ծափահարություններ)։

Մեր հասարակագետների կարևոր խնդիրն է, որպեսզի նրանց ամբողջ գիտական աշխատանքը ներթափանցված լինի լենինյան ինտերնացիոնալիզմի ոգով, ուղղված լինի ժամանակակից ռևիզիոնիզմի, դոգմատիզմի և նացիոնալիզմի դեմ։

Կարևոր նշանակություն կունենա 10—12 հատորանոց սովետահայ հանրագիտարանի ստեղծումը։ Այդ աշխատանքն արդեն սկսված է ակադեմիայի մի խումբ գիտական աշխատակիցների նախաձեռնությամբ։ Սակայն այն առայժմ կատարվում է միայն հասարակական հիմունքներով։ Ցանկալի է ուժեղացնել այդ աշխատանքը այն հաշվով, որ մոտակա տարիներս ապահովվի առաջին հատորների լույս ընծայումը։

Ընկերնե՛ր։ Ինչպես տեսնում եք, ռեսպուբլիկայի գիտությունների ակադեմիայի առջև մեծ ու պատասխանատու խնդիրներ են դրված։ Անհրաժեշտ է ակադեմիայի ուշադրությունն ու ջանքերը կենտրոնացնել գիտության գլխավոր ուղղությունների զարգացման վրա, ավելի նպատակասլաց կերպով կատարել գիտական հետազոտությունները, անշափ բարձրացնել աշխատանքների որակի նկատմամբ գիտական աշխատողների պահանջկոտությունը և պատասխանատվության զգացումը, վերացնել անջատվածությունը և ապահովել ստեղծագործական կոնտակտ ու համաձայնեցվածություն գիտական հիմնարկների, բարձրագույն ուսումնական հաստատությունների և գիտնականների աշխատանքում։ *Հարկավոր է է՛լ ավելի լայնորեն ծավալել քննադատությունն ու ինքնաքննադատությունը, հասնել այն բանին, որ ակադեմիայի բոլոր ստորաբաժանումներում տիրի* գործարար և ստեղծագործական մթնոլորտ։

Ուզում եմ մեկ անգամ ևս ընդգծել, որ գիտական աշխատանքում մեր ակադեմիայի նոր, է՛լ ավելի մեծ նվաճումների կարևոր պայմաններից մեկը երիտասարդ ուժերի *անընդհատ է՛լ ավելի լայն ներհոսն է գիտության մեջ։ Մեր խնդիրն է՝ ճիշտ զուգորդել հին, վաստակավոր գիտնականների աշխատանքը տաղանդավոր երիտասարդներին ժամանակին առաջ քաշելու, նրանցից գիտության եռանդուն, գործիմաց և նոր խնդիրները հասկացող կազմակերպիչներ ձևավորելու հետ։*

Հայաստանի կոմունիստական պարտիայի Կենտրոնական կոմիտեն հաստատ վստահություն է հայտնում, որ Սովետական Հայաստանի գիտությունների ակադեմիայի գիտական աշխատողները, մեր պանծալի գիտնականները կմոբիլիզացնեն իրենց ստեղծագործական ուժերը, բոլոր հնարավորությունները և պատվով կկատարեն այն նոր ու պատասխանատու խնդիրները, որ նրանց առջև դնում է մեր մեծ լենինյան պարտիան։ (ԵՐԿԱՐԱՏԵՎ ԾԱՓԱՀԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ)։